պատուիրեց և յորդորեց զՁ. Պ. որ իւր գիրը յետ առնէ և ուր որ խօսեր է անոր պատուոյն դէմ, ինքնին մաքրէ անոր անունը . . . »

«Ժողովը իւր ստորագրութեամբ արդարապէս կը հրատարակէ թէ՝ Կ. Վ. Ազգին եւ Եկեղեցւոյ օրինաւոր, հաւատարիմ, կրօնասէր և մանաւանդ գիտնական վարդապետներէն մէկն է և զրպարտութեան հանդիպած. ուստի Ազգը բնաւ մէկ կասկած ընելու պատճառ չունի »։

21 Փետ". 1851

'ի Պատ". Հայոց

Մի գուցէ այս արդար վճիռը լինի պատճառ Վերապատուելոյն անհաշտատելութեան եւ վատ քինախնդրութեան, որ 'ի կենդանութեան զԿ. Վ. հաւատաքննական խարազանով այնքան զրպարտելէն և հալածելէն վերջը, այժմ գերեզմանին մէջ եւս հանգիստ չը թողուր։ Կը յաւատամք որ այն վճիռն կրկին անգամ կարդալով՝ իւր ազնարդ հասակին մէջ խիղճը մէկէն կը լուսաւորուի և որով կը խոստովանի, որ Կ. Վ. այնչափ հաւատարիմ էր և հնազանդ Հայոց Ազգին և Եկեղեցւոյ, որչափ ինքը հաւատարիմ է Պապին և նորա Եկեղեցւոյն։

Գալով Վերապատուելոյն մեղադրած հարցման, կ'ասենք, որ ինքը իւրեւ Քաղկեդոնիկ մը բնաւ իրաւունք չունի մեր Եկեղեցւոյ դաւանութիւնը պահանջելու. իսկ եթէ ըսէ, թէ իւրեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ հաղորդ զաւակ կ'ուզեմ հարցուցեր, այն ժամանակ կը յայտնենք, որ մինչեւ Լեւոնի տոմարը և Վատիկանի գերեզմանը աչքին կը հանէ, չը պիտի կարողանայ տեսնել այն տարբերութիւնը, որ մեր Եկեղեցին ունի հաստատութեամբ Հռովմէական Եկեղեցւոյն։

Դիտելիք հաւատ՝ սա, որ այս ամենն ըստ ածներին ապացոյցներն մի չը պիտի առնեն Զամուրճեանի վերայ. և նորա բնաւորութիւնը կանխաւ իմանալով այսքան եւս չը պիտի խօսէինք, եթէ ուղղակի մեզ պատասխանած լիներ, այսինքն կամ՝ ուղղակի յետ առներ իւր խօսքը Նիկիոյ Բ. Ժողովին տիեզերական ասելու մասին և կամ հաստատեր, որ մեր Եկեղեցին ընդունած է զայն իբրեւ տիեզերական։ Բայց Զամուրճին կը զլանի՞ ուղղակի պատասխան տալ, քանի որ իւր գլխաւոր նպատակն է, Նիկիոյ Բ. Ժողովին տիեզերական ինքնահնար անուն տալով՝ Քաղկեդոնի Ժողովին տիեզերականութիւնը վաւերացընել 'ի պատիւ անդրանկական պաշտաման իւրոյ և 'ի փառս Հռովմէական Եկեղեցւոյ, որում կամակատար եւ անձնուէր ծառայ կը հանդիսանայ յօրէ անտի մահերմական դաշնակցութեան ընդ պաշտօնակատարին Ժեզուիթայ, ըստ իրեն կրօնասէր եւ հայասէր Էօժէն — Պօրէլ։

ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մարդկան ազգի մէջ շատ մոլութիւններ կան զորս բառնալու համար պէտք է միահաղոյն աշխատին Եկեղեցականք, Ուսուցիչք, Դաստիարակք, Տէրութիւնք, ծնողք, մէկ խօսքով բովանդակ մարդկային ընկերութիւնը։

Պէտք էր ամենն որ միաբանէր վերցընելու և հալածական ընելու մարդկութեան մէջէն այս մարդկային կենաց, պատուոյ, ընչից և բարուց ոխերիմ թշնամի այլանդակ հրեշները ինչպէս են, զեղխութիւն, շուայտու-

digitised by A.R.A.R.@

թիւն, արբեցութիւն, հեշտասիրութիւն, գողութիւն, սպանութիւն, ստախօսութիւն և այլն որք մահ են ուղիղ բարոյականութեան և թշնամի երջանկութեան մարդկան. մանաւանդ ստախօսութիւնը։

Ստախօսութիւնը այն ամենաչար սխալներն մէկն է, որոյ հետ կապուած են գրեթէ ամէն տեսակ չարիք։ Այս սխալը ստոյգապէս ծնաւ. և նոյն ինքն սուտ խօսողն է այլ ոմն ստոյգ։

Ստախօսութիւնը խռովութիւն կը սերմանէ. սիրոյ և բարեկամութեան թշնամի է, ամէն չարութիւն, գողութիւն, սպանութիւն, շնութիւն, պոռնկութիւն և այլն գործել կ'ուտայ իւր պատուականերուն վատահանալով. բայց վերջապէս կը խայտառակուի եւ կը հալածուի։

Ստախօսութիւնն ընկերութեան շահուն և օգտին թշնամի է. վասն զի եղածը չեղած և չեղածն ալ եղած ներկայացնելով՝ մարդերը կը շփոթէ, ուղիղ դատողութիւնը կը խանգարէ, ճշմարտութիւնը թիւրելով սխալ խորհել և գործել կ'ուտայ 'ի վնաս բազմոց։ Ստախօսը իւր բանականութեան, խղճի և գիտակցութեան դէմ մեղանչելով մարդկային վստահութեան դէմ կը գործէ, ցած, նուաստ և ապականեալ արտի ու մարի տեր կը լլլայ. ուստի եւ անարժան է մարդկային ընկերութեան մէջ ապրելու. անարժան է մարդ կոչուելու անգամ, քանզի մարդկութեան կոչումն ալ ուրացած է, որ է ճշմարտասիրութիւն։

Ստախօսն է որ ընտանիք կը վրդովէ. ստախօսն է որ բարեկամներն իրարու առելի և թշնամի ընելով իրարմէ կը բաժնէ. ստախօսն է որ աղգերն ու ժողովուրդը կը յուզէ կը շփոթէ իրարու դէմ կը զինէ եւ չը թողուր որ լաւ գործքեր և ազգ աշխատութիւնք յառաջանան. թշնամի է բարութեան և շատ անգամ տապալիչ խոչ է գահերու և պետութեանց։

Ստախօսը մարդկան առջեւ յաջողութեան ճանապարհը խոտորելով և կորստեան ճանբոյ ցոյց տալով վնասուց խորխորատը կը ձգէ և չարաչար կը մեռանէ. աղքատին պարէնը կը յափշտակէ մեծամեծը խոտանալով, կամ զանազան յուսալի խաբեութիւններ և անօգուտ ծախսեր ընել կ'ուտայ։ Ստախօսութիւնը հակառակ լինելով բարոյին և ճշմարտին՝ թշնամի է Աստուծոյ։

Այսքան, և դեռ եւս ակէ շատ աւելի չարիք բովանդակող ստախօսութիւնը մինչդեռ պէտք չէր բնաւ մարդկան մէջ երեւէր, սակայն դժբաղդաբար ոչ միայն կայ եւ շատ կայ. այլ նաեւ պաշտպան և ջատագովներ ալ ունի. չէ թէ միայն հասարակ մարդիկներէ այլ և վատահութեան արժանի սեպուածներէ, կրօնաւորներէ, ուսուցիչներէ իշխաններէ և բարձրագահ վեհապետներէ։

Սորա այսպէս լինելը մեծ դժբաղդութիւն է աշխարհի, և յետին աստիճան անարգութիւն ու թշուառութիւն է մարդկան ազգի։

Վայ անոր, որ անգամ մի թոյլ տուած է իւր անձին կամ ինքն իրեն ներած է որ սուտ խօսի. առաւել ևս վայ անոր, որ ստախօսի մը հետ գործ կամ յարաբերութիւն կունենայ։

Երբ մէկը թոյլ կուտայ անձին որ մտներ կամ անվնաս համարուած սուտեր խօսի, թէպէտ իրօք անվնաս սուտ չը կայ. սուտն ինքնին վնասէ. այնպիսին օր յաւուր կը յառաջանայ և մեծամեծ ու խիստ վնասակար սուտեր ալ խօսելու կը ժպրհի անխիղճ և անամօթ. որ շատ անգամ այլոց վնասուն հետ ինքն ալ չարաչար կը վնասի. ոչ միայն

digitised by A.R.A.R.@

ուրն անդրդամութիւնը մինչեւ այն աստիճան կը հասնի որ իւր մէկ յուսացած ընկերն անոնց օգտին համար բաղմոց օգուտը կը զոհէ եւ կը համարի թէ լաւ ըրաւ, սակայն իւր հանապազ օրեայ թշուառութիւնը կը վկայէ որ արդարութիւնը նորա չարիաց հաստատումն ընելու համար ճշմարտութեան վրիժառու սրովը շարունակ նորա օգուտն ու պատիւը, փառքն ու խաղաղութիւնը քանդելու ջարդելու եւ ոչընչացնելու վրայ է։

Ո՞հ, որչափ ցանկալի էր որ աշխարհիս մէջ չը գտնուէին երբէք ոչ ստախօս, ոչ կեղծաւոր շողոքորթներ եւ ոչ չարահնար խաբեբայներ. յայնժամ աշխարհ կը խաղաղէր ամէն տեսակ վրդովմունքէ. քանզի մոլու թեանց մեծ մասը պակաս պիտի լինէր, քանզի ճշմարտասէրը կամ բնաւ ինամակար բան չընէր, կամ թէ դիպուածով ու սխալմամբ ընէ ալ շուտով կը գղջայ եւ ուրիշ անգամ սատիկ կը զգուշանայ։

Նոր տեսակ ստախօս խաբեբայի մը օրինակ դնենք այս տեղ։

Ամոյս մէջ Զունիսուլի Ցակովբ անուն կակաղ անձ մի եկաւ այս տեղ եւ լաւ ստուաւ որ՝ Բառասուն հոգի ուխտաւոր կուգան. նոքա կեսս ճանապարհին վերայ հանդստանալու համար դադրեցան եւ միայն ուճապարեցի եկայ լուր տալու»։ Պատմեց նաեւ թէ վեհաստուն օրի չափ կայ որ ճանբայ եկած են և ձմռան ստատկութեան առթիւ մեծամեծ նեղութիւններ կրած և կորուստներու հանդիպած են։ Մինչեւ իսկ Ս. Պատրիարքը Հոր ներկայութեան խօսեցաւ այս ամէնը առանց խղճելու։ Միաբանութիւնը յաւօք սրտի լսեց եւ կարեկցելով փութայ պատրաստութիւններ տեսնել որպէս զի եկողները հանդստանան։

Երբ բաւական ուշացան, համարելով թէ երեկոյին կ՝ուգան, յաստուկ քառասուն հոգւոյ համար կերակուր եւս պատրաստուեցաւ։ Բայց ժամանակն անցաւ, եկող չը կար, այս խաբեբան ալ արդէն ետիեղուան դէմ թեւը նշան ընել տալով կծիկը դրած էր։ Վերջապէս մինչեւ գիշեր տակաւին կրսպասուէր որ պիտի գան, բայց մինչ ցարդ չկ՝ եք ոք, չկ՝ ուրիք։

Հիմա միայն սա չեմք գիտեր թէ արդեօք այդ ստախօսը վանքին այս չափ որոմաշուք, հոգ, մոռտանջութիւն պատճառելով եւ սասկ նեղ ժամանակ ունայն տեղը այսքան ծախք ընել տալովը ինքն ինչ շահեցաւ, միթէ դիւական պարծանքն ու խնդութիւնը շատ պիտի համարի. ամօթ մարդկութեան որ իւր մէջ այսպիսի անդամներ կը ծնուցանէ։

digitised by A.R.A.R.@